

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՃԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ \$ԱԿՈՒԼՏԵՏ

**ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-	022201.00.6 «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-	022201.01.6 «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ-	ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲԱԺԻՆ 1.

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ինտեգրումը Բոլոնիայի գործընթացին ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

1.2. Սույն ուղեցույցի դրույթները հիմնված են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի», ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 15-ի նիստի N 10 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագրի», «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցի» և ՀՀ ԿԳՄՍՆ հրահանգչական նամակների վրա:

2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները¹

Համաեվրոպական ECTS (European Credit Transfer and Accumulation System, ԵԿՊՀ-կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ) կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՎՊՀ-ի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:

2.1. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնասառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորման

¹ ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»

աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

- 2.2. **Կարողությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դիսամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) և ընդհանուր (անկախ բնագավառից):
- 2.3. **Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:
- 2.4. **Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ և ոչ թե առանձին մասերով: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:
- 2.5. **ECTS կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
- 2.6. **ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**
 - ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
 - կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
 - կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
 - ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
 - կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
 - կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2.7. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը
միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով: Այն նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

2.8. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

2.9. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթներն են.

- ա) կրեդիտների փոխանցում, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն
- բ) կրեդիտների կուտակում. ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության, ինչպես նաև ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն

2.10. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից

ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորությունն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան:

2.11. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- ուսումնական ծրագիրը բաղկացած է արտադիր և ընտրովի դասընթացներից, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և/կամ դասախոսին նախապատվություն տալուց,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաժամալը

- Վանաձորի պետական համալսարանում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական տարվա բեռնվածությունը 60 կրեդիտային միավոր է (1800 ակադեմիական ժամ), իսկ ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր (10% թույլատրելի շեղումով),
- ECTS 1 կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
- Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է (կիսամյակը՝ 20 շաբաթ), որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով:
- Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը կազմում է 240 կրեդիտային միավոր:
- Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը կազմում է 120 կրեդիտային միավոր:
- Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

4. Դասընթացները և կրթական մոդուլները

- Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին՝
- Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների՝
- Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, և ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

5. Կրեդիտների հատկացումը

- Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:
- Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:
- Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար սահմանվում է ամբողջական թվերով արժեքներ:
- Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

6. Գնահատման համակարգը

6.1. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի հիմնադրույթները.

- Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

- Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

- Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ուսանողի ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած գիտելիքների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:

- Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում դասընթացի ուսումնասիրված բաժինների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը՝

- ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,

- բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,

- գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը:

- Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

- Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից:

- Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝

- ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

- բ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,

- գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում- գնահատում,

դ)կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և հանրագումարային քննություններ կամ ստուգարքներ),

ե)ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

6.2. Գնահատման մեթոդաբանությունը.

- Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ անփոփոխ ստուգման կազմակերպման ձևի լինում են.

ա) քննությամբ ավարտվող դասընթացներ,

բ) ստուգարքով ավարտվող դասընթացներ:

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության ուսումնամեթոդական փաթեթում:

- Քննություններով ավարտվող առարկաների ցանկը որոշում է տվյալ ֆակուլտետի գիտական խորհուրդը:

- Քննությամբ ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագումարային քննության (այսուհետ՝ Չանրագումարային քննություն) հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ քննություն (ըստ աշխատանքային պլանի): Ընթացիկ քննությունը, որպես կանոն, անցկացվում է գրավոր (ուսանողների կամ տվյալ առարկայի դասախոսի հիմնավորված առաջարկությամբ և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով):

- Սահմանվում են ընթացիկ քննության առաջադրանքի հետևյալ ձևերը^ա հարցաշար, թեսթ, ստուգողական աշխատանք, վերջիններիս զուգակցում կամ ստեղծագործական աշխատանք:

- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի առնվազն 8 միավորով գնահատվող հատվածը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով:

- Չանրագումարային քննության ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի գիտական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին՝ հաջորդ ուսումնական տարվա համար:

- Ստուգարքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի

ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով ամփոփվող ստուգարքով:

- Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր-բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի գիտական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին՝ հաջորդ ուսումնական տարվա համար:

- Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում: Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ դասընթացը վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

- Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքնն.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի.

- Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1:

- Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է 5 միավոր - դասախոսություններին հաճախելու համար, իսկ 15 միավոր - գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքներին հաճախելու համար (հավելված 1):

- Լսարանային պարապմունքներին հաճախումները որոշվում են համաձայն հետևյալ հաշվարկի.

$$ՀՄ = Դ + Գ,$$

որտեղ^a

ՀՄ - հաճախումներին հատկացվող միավորը,

Դ - դասախոսությունների մասնակցությանը միավորը,

Գ - գործնական (սեմինար, լաբորատոր) պարապմունքների մասնակցությանը միավորն են:

- Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում:

- Դասընթացի լսարանային պարապմունքների հաճախումների համար հատկացվող միավորը որոշվում է ըստ հաճախումների քանակի և համարժեք տոկոսի (հավելված 1):

- Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է դասախոսը կամ խմբի (կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:

- Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և

(կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր ամսվա վերջում ակադեմիական խորհրդատուի կամ դեկանի կողմից ստանում է նախազգուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:

- Տվյալ ամսվա ընթացքում վավերացված բժշկական փաստաթղթի հիման վրա հարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար դեկանատի գրավոր թույլտվությամբ ամբիոնը կազմակերպում է չկատարած լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն: Այդ դասաժամերին ուսանողների մասնակցության դրական արդյունքների դեպքում բացթողումները համարվում են լրացված և ամրագրվում են մատյանում:

- Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

- Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է առավելագույնը 10 միավոր:

- Ինքնուրույն աշխատանքի ձևերից են^a ռեֆերատը, անհատական տևային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն1:

- Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:

- Եթե ինքնուրույն աշխատանքը (անհատական առաջադրանքը) նշանակված ժամանակահատվածում կատարված է և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատվում է դրական (8-20 միավոր):

- Բոլոր առաջադրանքների դրական գնահատականների (8-20) միջինի դեպքում տեղեկագրում համապատասխանաբար նշվում է գնահատականը: 8-ից ցածր արդյունքի դեպքում տեղեկագրում գրվում է զրո: Հանրագումարային միավորի հաշվարկման ժամանակ դրական գնահատված ինքնուրույն աշխատանքների համար տրվում է 10 միավոր:

- Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները նշանակվում են մատյանում և տեղեկագրում:

- Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանն ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ3), որը գնահատվում է առավելագույնը 20 միավոր:

- Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցությունը և ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում:

- Կիսամյակում դասընթացի գործնական (սեմինար) ու լաբորատոր

աշխատանքներին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

- Դրական (8 և ավելի) գնահատականների միջինի դեպքում տեղեկագրում համապատասխանաբար նշվում է գնահատականը, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում տեղեկագրում գրվում է զրո : Հանրագումարային միավորի հաշվարկման ժամանակ դրական գնահատված գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների համար տրվում է 20 միավոր:

- Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (94):

- Ընթացիկ քննությունների դրական գնահատականների միջինը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական:

- Տվյալ դասընթացի ընթացիկ քննություն(ներ)ից 8-ից ցածր միավոր ստացած կամ ընթացիկ քննությանը չներկայացած ուսանողը հնարավորություն է ստանում այն (վերա)հանձնելու հանրագումարային քննության օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում:

- Բանավոր քննության թույլատրվում են այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատականներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում (հանրագումարային քննության նախորդ օրը ընթացիկ քննություն(ներ)ը հանձնած ուսանողը հանրագումարային քննության չի թույլատրվում):

- Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով: Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է:

- Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում:

- Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (95), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են 11-20 միավորներով և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը):

- 10-ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր:

- Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների գնահատումից (96), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

- Ուսանողի ձեռք բերած կարողությունները գնահատվում են 8-20 միավորներով (քննության միավորին համարժեք), եթե ուսանողը հանձնել է քննությունը, գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են դրական, ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական:

- Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար`

$$Գքնն = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

- Ստուգարքով ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած հանրագումարային/կիսամյակային միավորը (գնահատականը) (Գստ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում ըստ հետևյալ բաղադրամասերի`

- դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից` Գ1, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր (տես 17.1. կետը).

- ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից` Գ2, որին հատկացվում է 10 միավոր (տես 17.2 կետը).

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունից և ակտիվությունից (Գ3), որին տրվում է 20 միավոր (տես 17.3 կետը).

- ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռքբերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների դրական գնահատականների (8 և բարձր) արդյունքների միջին գնահատականից (Գ4):

- Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 20 բալանոց համակարգով: Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում:

- Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների (Գ5) և կարողությունների (Գ6) գնահատումից: Այս դեպքում նորից հմտություններն ու կարողությունները արժևորվում են տեսական և գործնական գիտելիքների դրական գնահատման դեպքում (տես 17.5 և 17.6 կետերը):

- Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար`

$$Գստ. = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

- Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և (կամ) անհատական պարապմունքներ` ըստ ժամանակացույցի:

- Կուրսային աշխատանքի կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «ՎՊՅ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով

կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգ»-ով:

- Պրակտիկան գնահատվում է քննության ձևով՝ 100 միավորանոց սանդղակով՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական կամ արտադրական պրակտիկաների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ»-ով (ընդունված Համալսարանի գիտական խորհրդում, 25.02.2016թ.), «Համալսարանի մագիստրոսական ծրագրով մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայի կազմակերպման, անցկացման, արդյունքների գնահատման կանոնակարգ»-ով (ընդունված Համալսարանի գիտական խորհրդում, 25.02.2016թ.), «Համալսարանի մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ»-ով (ընդունված Համալսարանի գիտական խորհրդում՝ 25.02.2016թ.):

- Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման մասին» կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով):

6.3. Կիրարկման ընթացակարգը

- Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8- միավորանոց թեստային առաջադրանք:

- Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնամեթոդական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

- Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

- Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

- Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

- Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):
- Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:
- Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):
- Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:
- Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):
- Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և մատյանում գրանցվում է «Չներկայացած»: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

6.4. Ստուգարքների ամփոփումը

- Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:
- Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական-սեմինար պարապմունքները:
- Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:
- 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

6.5. Քննությունների անցկացումը

- Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18-20-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:
- Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի

առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնամեթոդական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

- Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից առնվազն մեկ ամիս առաջ:
- Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:
- Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կամ այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:
- Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն
- Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:
- Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը, կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:
- Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:
- Դեկանը ստուգման օրը դասախոսին տրամադրում է ուսումնամեթոդական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.
- «Քննության չի թույլատրված» (թանաքով)՝ այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,
- բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում է» գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:
- Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում

գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

- Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:
- Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

6.6. Գնահատման սանդղակը և նշագրումը

- Համալսարանում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:
- Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել «Չստուգված», կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:
- Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.
 - 8-20 միավորները համարվում են դրական գնահատական,
 - 1-7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):
- Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս «Ակադեմիական ազնվության կարգ»-ը) այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

Մասնակցության %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12
61-65	2	12
56-60	1	11

51-55	1	11
0-50	0	0

Ուսումնառության արդյունքների գնահատման 100-միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«Գերազանց» (5)	96-100	A+
«Գերազանց» (5)	91-95	A
«Գերազանց» (5)	86-90	A-
«Լավ» (4)	81-85	B+
«Լավ» (4)	76-80	B
«Լավ» (4)	71-75	B-
«Բավարար» (3)	67-70	C+
«Բավարար» (3)	62-66	C
«Բավարար» (3)	58-61	C-
«Անբավարար»	0-57	D
«Ստուգված»	58-100	S
«Չստուգված»	0-57	U

6.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

- Դրական գնահատված դասընթացի քննության (ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:
- Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական փաստաթղթի առկայության դեպքում:
- Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-
 - 57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:
- Ակադեմիական պարտքերը հանձնում են պարտքերի մարման շրջանում, որը հաստատվում է ժամանակացույցով: Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական

տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք: Վերահանձնման կամ կրկնման համար կազմվում է անհատական ժամանակացույց, որի մեկ օրինակը տրամադրվում է ուսանողին:

- Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

- Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

- Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

- Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում են ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

- Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշներ՝

- ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը,
- գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը,
- վարկանիշային միավորները (ՎՄ),
- միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

- Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

- Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$ԳԿ = \sum (\text{Կրեդիտ})$$

- Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

- որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360$ 500 հնարավորից:

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\sum \text{ԳԿ}}$$

- Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).
- Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:
- Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում Համալսարանը պարտավոր է, համաձայն գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:
- Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):
- 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Անձնակա ն համար	Անուն, հայրանուն, ազգանուն		Մասնագիտություն	
1-11	Աբգարյան Աբգար Աբգարի		Իրավագիտություն	
Բակալավրի կրթական ծրագիր				
1-ին կիսամյակ, Աշնանային կիսամյակ 2020 թ.				
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատակա ն	Թվային միավորներ
N/N ****	Դասընթաց 1	5.0	A	100
N/N ****	Դասընթաց 2	5.0	B-	71
N/N ****	Դասընթաց 3	5.0	A	100
N/N ****	Դասընթաց 4	5.0	B	75
N/N ****	Դասընթաց 5	5.0	A	100
N/N ****	Դասընթաց 6	5.0	B-	71
Ծրագրային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշ ային միավորներ	Կիսամյակայի ն ՄՈԳ
30		30	2585	86.1
Ընդհանրացված արդյունքները 2020թ աշնանային կիսամյակից հետո				
Լրացված ծրագրային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ		Վարկանիշա յին միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
30	30		2585	86.1
2-րդ կիսամյակ, Գարնանային կիսամյակ 2021թ.				
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
N/N ****	Դասընթաց 1	5.0	B	75
N/N ****	Դասընթաց 2	5.0	A	84
N/N ****	Դասընթաց 3	5.0	A+	100
N/N ****	Դասընթաց 4	5.0	A+	97
N/N ****	Դասընթաց 5	5.0	B	75
N/N ****	Դասընթաց 6	5.0	A+	99
Ծրագրային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակայի ն ՄՈԳ
30		30	2650	88.3
Լրացված ծրագրային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ		Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
60	60		5235	87.25
Ամփոփիչ արդյունքներ				
Ծրագրային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշա յին միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
60		60	5235	87.2 5

8. Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները

8.1. Համալսարանի սովորողներն են ուսանողները (բակալավրային համակարգում առնվազն քառամյա, իսկ մագիստրանտական համակարգում առնվազն երկամյա ուսուցման և հնգամյա դիպլոմավորված մասնագետների պատրաստման ուսուցման ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ռեկտորի կողմից հրամանագրված անձինք) և ասպիրանտները, ինչպես նաև քոլեջի ուսանողներն ու հենակետային վարժարանի աշակերտները:

8.2. Համալսարանի սովորողներն իրավունք ունեն`

- սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների` ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը.
- ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու Համալսարանում կարդացվող դասախոսություններին.
- մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)` պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը.
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից` յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է Համալսարանում` ըստ սահմանված կարգի.
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան.
- ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին.
- օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.
- ըստ նախասիրությունների` մասնակցելու Համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.
- ընդգրկվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և այլ ուսանողական կազմակերպություններում.
- բողոքարկելու Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների և ստորաբաժանումների ղեկավարների հրամաններն ու կարգադրությունները` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

- օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.
 - ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի կողմից սահմանված կարգով ստանալու պետական, անվանական, ինչպես նաև իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ.
 - ծանոթանալու Համալսարանի կանոնադրությանը և այլ իրավական փաստաթղթերի.
 - լիազոր մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում՝ ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.
 - ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ.
 - սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները.
 - ուսման բարձր առաջադիմության, հասարակական ակտիվության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի սահմանած կարգով.
 - սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու Համալսարանի կառավարման համապատասխան մարմիններում և մասնակցելու այդ մարմինների աշխատանքներին:
- 8.3. Համալսարանի սովորողներն ունեն ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:
- 8.4. Կրթությունն ընդհատած նախկին ուսանողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվելու Համալսարանում:
- 8.5. **Համալսարանի սովորողները պարտավոր են՝**
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները.
 - տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, կարողություններին, կոմպետենցիաներին և հմտություններին.
 - անշեղորեն կատարել Համալսարանի կանոնադրության, Համալսարանի ներքին կարգապահական կանոնների, Համալսարանի Էթիկայի և վարքագծի կանոնների, ներքին իրավական մյուս ակտերի պահանջները.
 - հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին.
 - հոգատար վերաբերվել Համալսարանի գույքին.
 - բարձր պահել Համալսարանի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը.
 - լինել կարգապահ, Համալսարանի բոլոր ուսումնական, ուսումնաարտադրական և այլ կառույցներում պահպանել մաքրություն.

- Համալսարանում իրեն պահել արժանավայել՝ հետևելով հասարակական համակեցության կանոններին,
 - հետևել բարոյական և էթիկական նորմերին, չխոչընդոտել աշխատողներին և այլ սովորողներին՝ կատարելու իրենց պարտականությունները,
 - հարգել աշխատակիցների և սովորողների իրավունքները և ազատությունները, անձի արժանապատվությունը,
 - թույլ չտալ Համալսարանի սովորողին անվայել արարք, հոգալ Համալսարանի վարկանիշի մասին ինչպես ուսման վայրում, այնպես էլ առօրյա կյանքում,
 - կրել լիակատար նյութական պատասխանատվություն իր մեղքով Համալսարանին նյութական վնաս պատճառելու դեպքում:
- 8.6. Դասակարգից 10 րոպեից ավելի դասախոսի կամ ուսուցչի չներկայանալու դեպքում ուսանողները խմբի ավագի միջոցով պարտավոր են այդ մասին հայտնել համապատասխանաբար ֆակուլտետի դեկանատ, քոլեջի տնօրինություն կամ հենակետային վարժարանի տնօրինություն:
- 8.7. **Վճարովի հիմունքներով կրթությունն ստացող ուսանողները պարտավոր են նաև՝**
- սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձավճարը, ուսման վարձավճարը ժամանակին չվճարելու դեպքում այդ ուսանողները կարող են հեռացվել Համալսարանից.
 - կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, Համալսարանի այլ ներքին իրավական ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականություններ:
- 8.8. Պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է չներկայացած օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել համապատասխանաբար ֆակուլտետի դեկանին, քոլեջի տնօրենին կամ հենակետային վարժարանի տնօրենին, իսկ Համալսարան հաճախելու առաջին իսկ օրը ներկայացնել փաստաթղթեր կամ բացատրագիր պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին:

ԲԱԺԻՆ 2.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍՆԱԳԻՐ**

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	022201.00.6 Պատմություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	022201. 01.6 Պատմություն
3. Շնորհվող որակավորումը	Պատմության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	Հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2017-2022թթ.
8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները	
<p>Պատմության բակալավր, «Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա պետական նմուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջնակարգ մասնագիտական կրթության վկայական կամ բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ և հաջողությամբ հանձնած լինի քննություններ «Հայոց լեզու և գրականություն» (փոխանցվում է ատեստատից), «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն» կամ «Օտար լեզու» առարկաներից:</p>	
9. Կրթական ծրագրի նպատակները	
<p>Ծրագիրը նպատակաուղղված է պատմության բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, գիտության, ինչպես նաև այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:</p> <p>Ծրագրի նպատակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար, ✓ պատմական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմքերի խորացված ուսումնասիրության կազմակերպում, ✓ ինքնուրույն գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորում, գիտականորեն հիմնավորված ուսուցման և գիտահետազոտական աշխատանքի ժամանակակից տեխնոլոգիաների յուրացում, ✓ ուսանողների մոտ ինքնաքննադատության, ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտության ձևավորում: 	

10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները

Գիտելիքներ

- ատմագիտության բովանդակությունը, հիմնական փուլերը և զարգացման ուղղությունները, պատմության իմաստն ու նշանակությունը
- հայոց պատմության ընթացքը, փուլերը, կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի քաղաքական դրությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում
- համաշխարհային պատմության ընթացքը, փուլերը, պատմական մտքի զարգացման հիմնական ուղղությունները
- հայ ազատագրական շարժման նախադրյալները, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորումը
- պատմական առանձին ժամանակաշրջանի հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ժամանակակից պատմագրության գնահատականները
- ազգային և օտար հեղինակների՝ հայերի և Հայաստանի մասին երկասիրությունները, հայ իրականության մեջ աղբյուրագիտական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման սկզբունքները
- պատմագիտական ուսումնասիրություններում պատմական սկզբնաղբյուրների դերն ու նշանակությունը, պատմական սկզբնաղբյուրների ներքին ու արտաքին քննադատության, նրանց պարունակած փաստերի վավերականության ստուգման մեթոդները:
- համաշխարհային պատմական մտքի զարգացումը, պատմական առանձին դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների պատմագիտական հայացքները և հիմնական գաղափարները
- հնագիտության հիմնադրույթները, հնագիտական պեղումների պարբերացման ու պատմամշակութային գործընթացների տրամաբանությունը
- Պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքը, նրա սահմանները, ռելեֆն ու ջրագրությունը, Հայկական լեռնաշխարհի տարածքում գոյություն ունեցած վարչաքաղաքական միավորների տարածքային ընդգրկումներն ու ներքին բաժանումները, Մեծ և Փոքր Հայքերի գավառական կազմը, Պատմական Հայաստանի պատմամշակութային նշանավոր վայրերը:
- ազգագրական գիտության ձևավորման ու զարգացման պատմությունը, տեսական, մեթոդաբանական հիմնախնդիրները, աշխարհի բնակչության տեղաբաշխման ու էթնիկ կազմի առանձնահատկությունները, պատկերացում ունենա հայոց էթնոմշակութային ժառանգության և նրա առանձին ոլորտների մասին
- հայ ազգագրության սկզբնաղբյուրները, ուսումնասիրության առարկան, մեթոդները, խնդիրները, զարգացման պատմությունը, հայոց ազգային կենցաղը, սովորույթներն ու ավանդույթները, ծեսն ու ծիսակարգը, վարվելակարգը և սովորութային իրավունքի ձևերը
- պատմական օժանդակ առարկաների՝ հնագրագիտություն, սերնդաբանություն, պատմական չափագիտություն, տեքստաբանություն, ժամանակաբանություն, գինանաշանագիտություն, ֆալերիստիկա, դրամագիտություն, կնիքագիտություն, դրոշակագիտություն տեսական դրույթները:
- հայ մշակույթի ձևավորման առանձնահատկությունները, զարգացման պատմական հիմնական շրջանները, ընդհանուր բնութագիրը, տարբեր ժամանակների մշակութային հայտնի գործիչների ստեղծագործությունները, նրանց թողած ժառանգությունը:
- Հայաստանի պատմական հուշարձանները, դրանց տեսակները, ձևավորման

- պատմությունը, ուսումնասիրման և պահպանության խնդիրները
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 4-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	4
			Սեմինար	4
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	52		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգաբաթ			
Դասընթացի նպատակը	<p>Ամեն մի արտադրատեղանակի նպատակը հասարակության և նրա անդամների պահանջմունքների բավարարումն է: Հենց դրան է ուղղված արտադրության գործընթացը, որտեղ լուծվում է տնտեսական երկու հիմնախնդրի միջև առաջացող մշտական հակասությունը:</p> <p>Ներկայումս խառը տիպի տնտեսության պայմաններում, հիմախնդիրը շուկայական գործընթացի գործողությունը, շուկայական հարաբերությունների զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկություններն են:</p> <p>Սահմանափակ ռեսուրսների պայմաններում, ավելի շատ պահանջմունքներ բավարարելու գործում մարդկանց ունեցած վարքագիծը:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • տնտեսական կատեգորիաներն ու օրենքները • տնտեսագիտական գիտելիքների դերը և գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում • առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում • հասարակության զարգացման պատմական փուլերի տնտեսական առանձնահատկությունները <p><i>Հմտություն</i></p>			

	<ul style="list-style-type: none"> • մեկնաբանել տնտեսական երևույթներն ու տնտեսագիտությունն առարկային, մեթոդներին և խնդիրներին • շուկայական հարաբերությունների օրինաչափություններին, այն բոլոր մեթոդներին, որոնք անհրաժեշտ են տնտեսական հավասարակշռություն և համաչափություն պահպանելու համար <i>Կարողունակություն</i> • մեկնաբանել տնտեսական երևույթներն ու գործընթացները, դրանց պատճառահետևանքային կապերը • կարողանա կատարել ճիշտ եզրահանգումներ • ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունը
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1 Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Տնտեսագիտության հիմնական ուղղությունները: Տնտեսագիտությունն առարկան, նպատակները և խնդիրները: Տնտեսական կատեգորիաներ և տնտեսական օրենքներ: Տնտեսագիտության տեսությունը որպես մեթոդոլոգիական գիտություն՝ մեթոդոլոգիա և մեթոդ: Տնտեսագիտության միկրո, մեզո, մակրո և մեզա շերտային կառուցվածքը: Թեմա 2 Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Շուկա, շուկայի հասկացությունը, ծագման պայմանները, սեփականության բազմաձևությունը: Շուկայի հիմնական տարրերը, ֆունկցիաները, գործունեության սկզբունքները, կառուցվածքը, ենթակառուցվածքները, օբյեկտները, սուբյեկտները: Շուկայի դասկարգումն ըստ ապրանքային խմբերի, տարածքային հատկանիշների, մրցակցության ձևի, շուկայի սուբյեկտների տեսակների: Շուկայական տնտեսության դրական և բացասական կողմերը: Թեմա 3 Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: Տնտեսական համակարգերը: Դրանց կազմակերպման հիմնական ձևերը: Ապրանքային արտադրության բնորոշ գծերը: Տնտեսական համակարգերի տիպերը և մոդելները: Թեմա 4 Շահույթ և շահութաբերություն: Ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: Շահույթ և շահութաբերություն: Շահույթի ելության և աղբյուրների մեկնաբանությունները: Շահույթի մեծությունը որոշող գործոնները: Շահույթի ֆունկցիաները: Շահույթի տեսակները (հաշվապահական, տնտեսական, ընդհանուր հաշվեկշռային և այլն): Մոնոպոլ շահույթ: Ձեռնարկատիրական եկամուտ: Աշխատավարձի տնտեսական հիմքերը: Աշխատավարձի ձևերը, տեսակները ու համակարգերը: Անվանական և իրական աշխատավարձ: Աշխատավարձի կազմակերպման տարիֆային համակարգի ելությունը: Թեմա 5 Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Տնտեսական աճի ելությունը: Դրան բնութագրող հիմնական ցուցանիշները: Տնտեսական աճի վրա ազդող գործոնները: Տնտեսական աճի տիպերը (էքստենսիվ, ինտենսիվ և խառը): Տնտեսական ճգնաժամ: ճգնաժամի տեսակները:</p>

	<p>Թեմա 6 Ինֆլացիա և գործազրկություն: Ինֆլացիայի բնորոշումը և հիմնական տեսակները: Առաջացման պատճառները և սոցիալ-տնտեսական հետևանքները: Տնտեսության պարբերական տատանումները և գործազրկությունը: Գործազրկության տեսակները և դրանց վրա ազդող գործոնները: Գործազրկության մակարդակը և ինֆլացիայի տեմպերը: Թեմա 7 Դրամա-վարկային համակարգի Էությունը: Բանկեր: Փող. տեսակները, պահանջարկը և առաջարկը: Հավասարակշռությունը դրամական շուկայում: Տոկոսադրույքի ձևավորումը որպես փողի գին: Դրամաշրջանառություն: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակության որոշումը: Վարկ. Էությունը, ձևերը և ֆունկցիաները: Բանկային համակարգ: Բանկերի տեսակները: Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրները և ֆունկցիաները: Առևտրային բանկերը և դրանց գործառքները:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Գնահատման մեթոդներն և չափորոշիչներն ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին Գնահատման չափանիշները (ընթացիկ ստուգումների) - տարբերակների երեք հարցերից յուրաքանչյուրին տրված պատասխանի բովանդակությունը - պատասխանի մեջ նյութի ինքնուրույն յուրացման մասնաբաժինը - շարադրանքի տրամաբանվածությունը, ծրագրային նյութի յուրացվածության աստիճանը - ծրագրային նյութից դուրս իմացությունը Գործնական աշխատանքների ընթացքում իմացության ստուգում Ինքնուրույն աշխատանքների գնահատում - Դասընթացի համապատասխան թեմաների մշակում և վերլուծություն - Հաճախելիություն Գնահատման մեթոդը - դասերին հաճախման հաշվառում Գնահատման չափանիշը - ներկայություն - մասնակցություն հարցերի քննարկմանը - Համակարգչային թեստային ստուգում Գնահատման չափանիշները - համակարգչային թեստային ստուգում նախատեսված չէ Ուսուցման վերջնական արդյունքների գնահատում՝ ստուգարք, արդյունքների հանրագումար՝ գնահատման հարյուր միավորանոց սանդղակով:</p>
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր- 1. Գ. Կիրակոսյան «Տնտեսագիտության տեսությունե, 2009թ. 2. Գևորգյան Մ.Ա. «Տնտեսագիտության տեսությունե, Երևան 1998 3. Գոռթևի Դ. Ջեյմս, Ռիչարդ Լ. Ստրոուպ, Ա.Յ.Սթուդենմունդի, Ռասել Ս. Սոբելի «Տնտեսագիտություն: Մասնավոր և հասարակական ընտրություն: Ե Թարգմանություն՝ գլխ. խմբագիր պրոֆ. Գ. Կիրակոսյան Երևան 1999</p>

	<p>4. Թովմասյան Ռ.Ա. «Տնտեսագիտության տեսություններ Երևան 2006</p> <p>5. Խաչատրյան Գ. Յ. «Տնտեսագիտության տեսություններ Երևան 2007</p> <p>6. Ղուլչյան Յ. Բ. «Մակրոտեկնոմիկաներ Երևան 1992</p> <p>7. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ. «Ճուլայական տեսության հիմնախնդիրները Երևան 2002</p> <p>8. "Մենեջմենթ" Յ.Մ, Սուվարյանի խմբ. Երևան 2002</p> <p>Լրացուցիչ-</p> <p>1. Войтов А. Г. „Экономика. Общий курс“ (фундаментальная теория экономики). Учебник М. 2003</p> <p>2. Гугасян Г. М. „ Экономическая теория. Ключевые вопросы.“ Учебник М. 2004</p> <p>3. Липсиц И.В. . „ Экономика. Учебник для вузов“: М.2004</p> <p>4. Макконелл К.Р. Брю С.Л. Экономикс: Принципы,проблемы и политика. В 2-х томах. М.1996</p> <p>5. Носова С. С. . „ Экономическая теория Краткий курс. “ М.2001</p> <p>6. Носов С. С. „ Основы Экономики.“ Учебник М. 2004</p> <p>7. Основы экономической теории. Курс лекции Под общ. ред. А.А.Кочеткова М.2004</p> <p>8. Райзберг Б. А. „ Основы Экономики. “Учебник пособие . М .2000 Стенлейк Дж.Ф. . „ Экономикс для начинающих. “ М.1994</p> <p>9. Торосян К. М. „ Теория оптимальной цивилизации.“ Гл.12-14 Ереван 2002</p> <p>10. „ Экономическая теория.“ Учебник. Под ред. Камаева В. Д. М. 2000</p> <p>11. „ Экономическая теория.“ Учебник. Под общ. ред. В.И.Видяпина и др. М.2005</p> <p>12. „ Экономика. .“ Учебник под ред. А.С.Булатова М.2001</p> <p>13. Янова В.В. „ Экономика. .“ Учебник М.2007</p>
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	Պ/բ-065-Քաղաքագիտություն			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 4-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	4
			Սեմինար	4
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	52		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Քաղաքագիտություն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ քաղաքական պատմության, գործընթացների և զարգացման փուլերի մասին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում ուսանողը պետք է գաղափար ունենա քաղաքական համակարգի, պետության կառավարման տիպերի և ձևերի, քաղաքական իշխանության, քաղաքական կուլտուրայի, քաղաքական կազմակերպությունների, իշխանության ձևավորման			

	<p>սկզբունքների, միջազգային քաղաքական կազմակերպությունների մասին:</p> <p>Առարկայի ուսումնասիրումը հնարավորություն կտա պատկերացում կազմել հայ ժողովրդի մշակութային նվաճումների մասին, գնահատել գեղեցիկն ու մշակութային արժեքները:</p> <p>Քաղաքագիտություն առարկայի ուսումնասիրմամբ ուսանողը միաժամանակ կշփվի համաշխարհային քաղաքական պատմության, մշակութաբանության, փիլիսոփայության և այլ գիտությունների հետ: Քաղաքագիտություն առարկան նախատեսված է ներկայացնել ոչ մասնագիտական բաժիններին, որպեսզի ապագա մանկավարժը գիտելիներ ունենա քաղաքական համակարգի և պետական կառավարման մասին</p>
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ol style="list-style-type: none"> 1) ինքնուրույն վերլուծել քաղաքական իրադարձությունները 2) տարբերել քաղաքաբան և քաղաքագիտական սուբյեկտների գործառույթները 3) տարբարակել պետական կառավարման համակարգի տիպերը 4) տարբերակել պետության տիպերն ու ձևերը 5) հասկանալ քաղաքական կոնֆլիկտների տիպերն ու կառուցվածքը, լուծման ուղիները <p><i>Յմտություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1) գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն 2) հետազոտություններ կատարելու ունակություններ 3) սովորելու ունակություն 4) առաջնորդի հատկություններ 5) որակի կարևորության գիտակցում <p><i>Կարողունակություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1) վերլուծման և համադրման ունակություն 2) կազմակերպման և պլանավորման ունակություն հենքային և ընդհանուր գիտելիքներ 3) տեղեկատվությունը կառավարելու ունակություն, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն 4) քննադատական վերլուծություն և ինքնաքննադատման ունակություն 5) միջառարկայական թիմում աշխատելու ունակություն
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները, մեթոդները, կապը հասարակական այլ գիտությունների հետ</p> <p>Թեմա 2. Քաղաքագիտության սուբյեկտները: Հասարակական քաղաքական համակարգ</p> <p>Թեմա 3. Պետություն, տիպերը, ձևերը</p> <p>Թեմա 4. Քաղաքական իշխանություն</p> <p>Թեմա 5. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Քաղաքական կուլտուրայի տիպերը</p> <p>Թեմա 6. Մարդու դերը քաղաքականության մեջ</p> <p>Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը: Իրավական պետություն</p>

Գնահատման մեթոդները և չափանիշները	<p>Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ.</p> <ul style="list-style-type: none"> ✓ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, ✓ ինքնուրույն աշխատանքի կատարում, ✓ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, ✓ թեստային առաջադրանք պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով
Գրականություն	<p>Պարտադիր</p> <ol style="list-style-type: none"> 1. Վ. Թումանյան «Քաղաքագիտություն, 1992թ. 2. Քաղաքագիտության ներածություն, 1994թ. 3. Քաղաքագիտություն ներածություն, Երևան, 1996թ. 4. Ռ. Պետրոսյան, Քաղաքագիտություն, Երևան 2002թ. 5. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015թ. <p>Լրացուցիչ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հ. Մանուչարյան «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմությանը Երևան, 2002թ. 2. Գ. Միրումյան «Քաղաքական ուսմունքների պատմությունը 2006թ 3. Зеркин, Основы политологии, 1999г. 4. Բ. Խաչատրյան, Քաղաքագիտություն, 2017թ.

Դասընթացի թվանիշը, անվանումը	OLԳ/բ- 042- Օտար լեզու / անգլերեն-1 OLԳ/բ -043- Օտար լեզու / անգլերեն-2 OLԳ/բ -044- Օտար լեզու / անգլերեն-3		
Դասընթացին հատկացվող կրեդիտը	12 կրեդիտ		
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին, 2-րդ կիսամյակ 2-րդ տարի, 3-րդ կիսամյակ		
Ժամերի բաշխումը	Լսարանային	16/	Դասախոսություն
		16/	Սեմինար
		16	Լաբորատոր աշխատանք
		Գործնական աշխատանք	16/16/16
	Ինքնուրույն	104/104/104	
	Ընդամենը	120/120/120	
Ստուգման ձևը	Ստուգարք		
Դասընթացի նպատակը	<p>Դասընթացի նպատակն է անգլերեն լեզվի քերականության ընդհանուր կառուցվածքի և մասնագիտական բառապաշարի ուսուցման միջոցով հնարավորություն տալ ուսանողին կարդալ, հասկանալ և մեկնաբանել «Կառավարումն առարկայի վերաբերյալ տքստեր, քննարկել որոշ հարցեր և արտահայտել սեփական մտքեր:</p>		
Դասընթացի վերջնադրյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի անգլերեն լեզվի քերականական կառուցվածքին և մասնագիտական բառապաշարին, որն անհրաժեշտ է անգլերենով հաղորդակցվելու, մասնագիտական գրականությունից օգտվելու համար</p>		

	<p><i>Չմտություն</i> Ձեռք բերած մասնագիտական օտար լեզվի խոր և համակողմանի գիտելիքները կարողանալ կիրառել գործնականում, տիրապետել գործնական հմտությունների</p> <p><i>Կարողունակություն</i> Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • կատարել ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ, զուգահեռներ անցկացնել դրանց միջև • ցուցաբերել «Կառավարումն առարկայի պահանջներին համապատասխան գիտական մտածողություն • վերլուծել և համեմատել տարբեր տնտեսագետների կողմից առաջադրված տեսակետներ
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Professional English in use / Management Կիսամյակ 1</p> <p>UNIT 1 Perspectives on management UNIT 2 Organization structures UNIT 3 Some management gurus UNIT 4 Management in different sectors UNIT 5 Resources managers use UNIT 6 Innovation and creativity UNIT 7 Screening ideas UNIT 8 Feasibility studies UNIT 9 New product development in practice UNIT 10 Intellectual property UNIT 11 Marketing / Marketing principles UNIT 12 Marketing planning UNIT 13 The marketing mix UNIT 14 Market research</p> <p>Կիսամյակ 2</p> <p>UNIT 15 Using the Internet for marketing UNIT 16 Doing business Online UNIT 17 Operations - Processes UNIT 18 Suppliers UNIT 19 Managing quality UNIT 20 Customer care UNIT 21 Operations Online UNIT 22 Recruitment and selection UNIT 23 Motivation and job design UNIT 24 Performance appraisal, feedback, training and development UNIT 25 Teams UNIT 26 Managing knowledge and learning in organizations UNIT 27 Leadership UNIT 28 Managing across cultures</p> <p>Կիսամյակ 3</p> <p>UNIT 29 Finance Financial accounting and management accounting UNIT 30 Business valuation and interpretation of accounts UNIT 31 Banking and financial services UNIT 32 Raising finance – equity and debt UNIT 33 Mergers and acquisitions</p>

	UNIT 34 Corporate governance UNIT 35 Risk management UNIT 36 Managing in difficult times UNIT 37 Strategic options UNIT 38 Analysis UNIT 39 Managing change UNIT 40 Action planning
Գնահատման մեթոդները և չափանիշները	1. Մասնակցությունը դասընթացին (ընդհանուր գնահատականի 20% -ը կամ 20 միավոր) 2. Մասնակցությունը գործնական աշխատանքներին (ընդհանուր գնահատականի 20% -ը կամ 20 միավոր) <ul style="list-style-type: none"> - Գնահատման մեթոդը` - Մասնակցությունը լսարանային քննարկումներին - Բանավոր հարցման արդյունքների հաշվառում 3. Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 10% -ը կամ 10 միավոր) <ul style="list-style-type: none"> - Գնահատման մեթոդը` - Ռեֆերատների կատարում - PowerPoint պրեզենտացիաներ - Դիտարկվող նյութի մասնագիտական վերլուծության ներկայացման որակ, - Գործնական այլ բնույթի աշխատանքների ստուգում:
Գրականություն	<i>Պարտադիր</i> Arthur Mckeown / Ros Wright Professional English in Use 2011 Cambridge <i>Լրացուցիչ</i> Adrian Pilbeam / Market Leader International Management Ian Badger Business English 2015 Cambridge Everyday Business English Longman Internet sources Լ.Ա.Հարությունյան Business English ԵՐԵՎԱՆ 2019

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՕԼԳ/Բ-003 Ռուսաց լեզու-3		
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ		
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 3-րդ կիսամյակ		
Ժամերի բաշխումը	Լսարանային	16	Դասախոսություն
			Սեմինար
			Լաբորատոր աշխատանք
			Գործնական աշխատանք
		16	
	Ինքնուրույն	104	
	Ընդամենը	120	
Ստուգման ձևը	Ստուգաք		
Դասընթացի նպատակը	Ուսանողի գռավոր և բանավոր խոսքի ձևավորումը և կատարելագործումը այն մակարդակում, որը բավարար է մասնագիտական տերմինաբանության համարժեք ըմբռնման և օգտագործման, կրթական, մասնագիտական և գիտական բնույթի հաղորդակցությանը մասնակցելու, սեփական տեսակետն արտահայտելու համար.		
Դասընթացի	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ		

վերջնարդյունքները	<p>վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p>Գիտի</p> <ul style="list-style-type: none"> - ուսումնասիրված բառային միավորների հիմնական իմաստները, որոնք սպասարկում են ռուսալեզու հաղորդակցության իրավիճակները կրթական, մասնագիտական և գիտական գործունեության ոլորտներում; - կրթության այս փուլի բանավոր և գրավոր հաղորդակցության մեջ օգտագործվող հիմնական քերականական երևույթները, կառուցվածքները; - ընդհանուր լեզվաբանության սկզբունքների հիման վրա թարգմանության և թարգմանական համապատասխանությունների գործընթացի հիմնական օրինաչափությունները. <p><i>Յմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> - մասնագիտական հաղորդակցության ոլորտներում և իրավիճակներում ռուսաց լեզվի օգտագործման ինքնավար հմտությունների կատարելագործման ռազմավարություն և մարտավարություն; - մասնագիտական գործունեության մեջ գրագետ բանավոր և գրավոր խոսքի կիրառման հմտություն; - առաջարկվող նյութի տրամաբանական ներկայացման կարողություն; - տարբեր աղբյուրներից տեղեկատվության հետ աշխատելու հմտություն; - տեսական դրույթների գործնական վերլուծության կարողություն և հմտություն; - մասնագիտական ոլորտում հանրային խոսքի, փաստարկի, քննարկման և վիճաբանության հմտություններ; - թարգմանության նախապատրաստման և կատարման մեթոդներ օգտագործելու հմտություն, ներառյալ տեղեկատվության որոնումը հղումներում, մասնագիտացված գրականության մեջ և համացանցում: <p><i>Կարողություն</i></p> <p><i>Կառող E</i></p> <ul style="list-style-type: none"> - ինքնուրույն արտադրել համահունչ, տրամաբանական հայտարարություններ ուսումնասիրված թեմաների վերաբերյալ; - կառուցել վերարտադրողական տիպի մենախոսություն տվյալ տեքստային նյութի հիման վրա, տարբեր ձևական իմաստային կառուցվածքների օգտագործմամբ (վերարտադրում, նկարագրություն, հաղորդագրություն); - ստեղծել համապատասխան մակարդակի հատուկ կազմված սյուժետային տեքստ, որը կառուցված է համապատասխան բառապաշարի և քերականական նյութի հիման վրա; -երկխոսություններ կազմել հատուկ բառապաշարի հիման վրա; - գրել մեկնաբանություններ, ամփոփումներ և այլն; - փոխակերպել նախադասությունները ուղղակի և անուղղակի խոսքով; - մեկնաբանել թեմայի և մենախոսության մեջ պարունակվող հիմնական տեղեկատվությունը; - կատարել թարգմանություններ, նաև թարգմանության գործընթացում բառապաշարային-իմաստային վերափոխումներ (տերմինաբանության թարգմանություն,
--------------------------	--

<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>տարբեր տեսակի դարձվածքների թարգմանությունը).</p> <p>Թեմա 1. Լեզվամշակութային ուսումնասիրություններ և լեզվաերկրագիտություն: Լեզվի և մշակույթի փոխազդեցություն</p> <p>Թեմա 2. Աշխարհի ռուսալեզու պատկերը</p> <p>Թեմա 3. Մասնագիտության լեզվի ներածություն. Գիտական հասկացության և տերմինի սահմանում</p> <p>Թեմա 4. Առարկայի բնութագրերը ըստ բաղադրության</p> <p>Թեմա 5. Առարկաների և երևույթների միջև կապի և կախվածության բնութագրերը. Թարգմանության ընթացքում նախադասության կառուցվածքային փոփոխություն.</p> <p>Թեմա 6. Բնության ուսումնասիրության մեթոդներ /դիտարկում, ենթադրություն, փորձ, տեսություն, բացահայտում, համեմատություն/</p> <p>Թեմա 7. Կապակցված տեքստի ստեղծման միջոցներ. Ստորադասական պայմանական նախադասությունները եթե կապի առկայությամբ</p> <p>Թեմա 8. Նույնարմատ բայեր և գոյականներ: Բայական բառակապակցությունների փոխակերպումը անվանականի. Բայական գոյականների ձևավորումը -ние (-ение, -ание, -яние) վերջածանցով: Գոյականների բառակազմական մոդելը:</p> <p>Թեմա 9. Տեքստի տեղեկատվական բովանդակության փոխանցումը դրա նկարագրության օգնությամբ՝ գնահատման տարրի ներառմամբ:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Սալիկահանդես, հարց ու պատասխան, թեստ, ստուգողական աշխատանք, ֆրոնտալ հարցում, բանավոր և գրավոր հարցումներ</p>
<p>Գրականություն</p>	<p><i>Պարտադիր</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Лексический минимум по русскому языку как иностранному. Элементарный уровень. Общее владение. СПб, 2012. 2. Лексический минимум по русскому языку как иностранному. Базовый уровень. Общее владение. СПб, 2011. 3. Лексический минимум по русскому языку как иностранному. Первый сертификационный уровень. Общее владение. СПб, 2011. 4. Лексический минимум по русскому языку как иностранному. Второй сертификационный уровень. Общее владение. СПб, 2013. 5. Программа по русскому языку для иностранных граждан. Первый сертификационный уровень. Общее владение. 6. 1-й уровень спб, 2012. 7. Типовые тесты по русскому языку как иностранному. Элементарный уровень. Общее владение. Варианты. Книга + 1cd. СПб, 2012. 8. Типовые тесты по русскому языку как иностранному. Базовый уровень. Общее владение. Варианты. Книга + 1cd. СПб, 2012. 9. Типовые тесты по русскому языку как иностранному. Первый сертификационный уровень. Общее владение. Второй вариант. Книга + cd. М., спб, 2012. 10. Киселева М.С. Русский язык как иностранный. М., 2010 11. Есаджанян Б. М., Кундратс Л. А. "К курсу практического

русского языка”. Ереван, 2006г.

12. Практический курс русского языка для студентов – психологов: Уч. материал/ Б.М. Есаджанян, Э.А.Баятян, Г.Г.Барикян, С.Р.Геворгян. Ереван, 2004г.

13. Практический курс русского языка / для студентов неязыковых вузов/Асатрян С.Ш. Ереван, 2016г.

14. Учебное пособие по русскому языку/для студентов факультета компьютерных систем и информатики. Тер-Оганесян М.Х. Ереван, 2011г.

15. Практикум по русскому языку / учебно-методические материалы для студентов физико-математического факультета/. Алоян Ж.Л. Ванадзор, 2014г.

Լրացուցիչ

1. Чеснокова Л.Д. Связи слов в современном русском языке. М., 1980.

2. Распопов И.П. Строение простого предложения в современном русском языке. М., 1970.

3. Лекант П.А. Синтаксис простого предложения в современном русском языке. М., 1974.

4. Ковтунова И.И. Современный русский язык. Порядок слов и актуальное членение предложения. М., 1976.

Մերթրախալան ձեռնարկներ

1. Бондалетов В.Д., Самсонов В.Г. Русский язык. Сборник упражнений. М., 2000

2. “Русский язык: экспериментальное пособие для нефилологических специальностей вузов государств – участников СНГ”. Москва, 2007

3. “Сборник упражнений по современному русскому языку” – под ред. П. А. Леканта Москва, 2001

4. Аксенова М.П. Русский язык по-новому. Часть 2. / Под ред. Р.А. Кульковой. СПб, 2000.

5. Аксенова М.П. Русский язык по-новому. Часть 3 / Под ред. Р.А. Кульковой. Спб, 2001.

Բառարաններ

6. Скворцов И.П. Большой толковый словарь правильной русской речи. М., 2006

7. Жуков А.В. Лексико-фразеологический словарь русского языка. М., 2007

8. Крысин Л.П. Учебный словарь иностранных слов. М., 2010

9. Лопатин В.В., Лопатина Л.Е. Толковый словарь современного русского языка. М., 2011

10. Вакуров В.Н. и др. Трудности русского языка: словарь-справочник. М., 2011

11. Баско Н.В. Фразеологизмы в русской речи: Словарь справочник. М., 2009

12. Сковородников А.П. Выразительные средства русского языка и речевые ошибки и недочеты: энциклопедический словарь-справочник. М., 2009

13. “Словарь синонимов и антонимов русского языка”. СПб, 2005г.

14. Ожегов С. И. Словарь русского языка М., 1991.

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՄԻ/Բ-146 Համակարգչից օգտվելու հմտություններ			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	8
	Ինքնուրույն	52		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգաթղթ			
Դասընթացի նպատակը	<p>«Համակարգչից օգտվելու հմտություններն առարկայի դասավանդման նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից ծրագրային և տեխնիկական ապահովման և դրանց կիրառության վերաբերյալ:</p> <p>Առարկայի ուսումնասիրության արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի գիտելիքներ Windows օպերացիոն թաղանթի, նրա հիմնական ֆունկցիաների ու ստանդարտ ծրագրերի, MS Word, MS Excel և Power Point կիրառական ծրագրերի վերաբերյալ:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p>Համակարգչի ծրագրային և ապարատային միջոցների մասին տեսական և պրակտիկ գիտելիքներ</p> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Համակարգչի ծրագրերի և սարքավորումների հետ համագործակցային աշխատանքի հմտություններ • Աշխատել Windows-ի ծրագրային միջավայրում, աշխատել ֆայլային համակարգի հետ: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Մուտքագել, խմբագրել, ձևավորել տեքստը, փաստաթուղթը՝ MS Word ծրագրային փաթեթի հնարավորություններից օգտվելով: • Կազմել աղյուսակներ MS Excel աղյուսակային ծրագրի օգնությամբ, կատարել պարզագույն հաշվարկներ, տեղադրել բանաձևեր, կիրառել ֆունկցիաներ, պատկերել համեմատական գրաֆիկներ: • Կարողանա ստանալ պրեզենտացիոն աշխատանքներ Power Point ծրագրային փաթեթով 			
Դասընթացի բովանդակությունը	<p>Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Մայր հարթակ, միկրոպրոցեսոր: Հիշողության տեսակներ: Ծայրամասային սարքեր:</p> <p>Թեմա 2. Աշխատանք Windows օպերացիոն համակարգի հետ: Windows ՕՐ-ի աշխատանքի ինտերֆեյսը: Աշխատանք ստանդարտ ծրագրերի հետ: ֆայլային համակարգ. ֆայլերի պատճենահանում, տեղափոխում, հեռացում, փնտրում, վերանվանում: Control Panel:</p> <p>Թեմա 3. MS Office ծրագրային փաթեթ: MS Word տեքստային խմբագիր ծրագիր: տեքստի մուտքադրման և ֆորմատավորման կանոնները: Աշխատանք</p>			

	<p>աղյուսակների հետ: Drawing գործիքների տողը , WordArt: Թեմա 4. MS Office ծրագրային փաթեթ: MS Excel աղյուսակային պրոցեսոր աշխատանքային գիրք, էջերի հեռացում ավելացում, վերանվանում , պատճենահանում, աշխատանքային դաշտ, բջիջներ, սյուներ, տողեր: Մաթեմատիկական հաշվարկների կատարումը բջիջներում բանաձևերի տեղադրման կանոնները: Բացարձակ և հարաբերական հասցեավորում : Ֆունկցիաներ: Տվյալների տեսակավորում և գտում:</p> <p>Թեմա 5. MS Office ծրագրային փաթեթ MS Power Point պրեզենտացիոն կիրառական ծրագիր: Սլայդների ստեղծում, դրանց միավորում ցուցադրական պրոյեկտի մեջ: Պրոյեկտի ներկայացումը պրեզենտացիոն ծրագրերի միջոցով</p> <p>Ձայնի, անիմացիաների տեղադրում: Տարբեր ոճերի սլայդների ձևավորում</p> <p>ծրագրի կիրառությունը մասնագիտական բնույթի նյութի ցուցադրության համար</p>
Գնահատման մեթոդները և չափանիշները	Նախատեսված է ստուգարք: Գնահատումը կատարվում է ըստ ՎՊՅ-ի « Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, եվ հաշվառման կանոնակարգի»
Գրականություն	Պարտադիր- Վ Յովսեփյան MS Windows, MS Office (Word, Exel, Access...) ծրագրային համակարգեր Լրացուցիչ- В.С.Симонович Информатика базовый курс, учебник для ВУЗ-ов

Դասընթացի թվանիշը, անվանումը	ԱՍ/բ-051 – Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	3-րդ տարի, 6-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	4
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	4
	Ինքնուրույն	52		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքացիական պաշտպանության համակարգին և հիմնական խնդիրներին, ինչպես նաև, արտակարգ իրավիճակներում վարքի կանոններին և բնակչության պաշտպանության հիմնահարցերին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. <i>Գիտելիք</i> Ուսանողը պետք է իմանա ✓ արտադրական իրավիճակների դասակարգումը, բնութագիրը, կանխարգելման միջոցները, ինչպես նաև բնական, Էկոլոգիական, տեխնաճին աղետներից պաշտպանվելու միջոցառումները:			

	<ul style="list-style-type: none"> ✓ զանգվածային ոչնչացման զենքերի տեսակների, դրանց կիրառման ժամանակ առաջացած հետևանքների, պայթարի ու կանխարգելիչ խնդիրները ✓ բնակչության պաշտպանության միջոցները արտադրական իրավիճակներում և պատերազմի ժամանակ ✓ ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների կառուցվածքները, տարիանման և ապակետրոնացման կազմակերպման սկզբունքները ✓ ռիսկի գործոնը արտակարգ իրավիճակներում, ճգնաժամային կառավարման մի շարք հարցերի գաղափարները: <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ բնակչության պաշտպանությանը անհատական և կոլեկտիվ միջոցներով ✓ հակազագից օգտվելու կանոններին ✓ շնչառական օրգանների պաշտպանության պարզագույն միջոցներին ✓ մարդասիրական օգնության կազմակերպմանը արտակարգ իրավիճակներում: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ դիմակայել բնական, էկոլոգիական, տեխնաժին աղետներին ✓ միջուկային, քիմիական, կենսաբանական զենքերից պաշտպանվել ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում ✓ ցուցաբերի առաջին բուժօգնություն տուժածներին ✓ աշխատել փրկարարական ջոկատներում:
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Արտակարգ իրավիճակներ, առաջացման պատճառները, զարգացման փուլերը և դասակարգումը:</p> <p>Թեմա 2. Տարերային աղետներ, վտանգավոր երևույթներ, առաջացման պատճառները: Տեխնաժին աղետներ բնակչության պաշտպանության հրատապ միջոցները:</p> <p>Թեմա 3. Չանգվածային ոչնչացման զենքի տեսակները, բնութագիրը և բնակչության պաշտպանությունը նրանից:</p> <p>Թեմա 4. Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ:</p> <p>Թեմա 5. Քաղաքացիական պաշտպանությունը, նրա նպատակները և խնդիրները: Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները:</p> <p>Թեմա 6. Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի նվազեցման համալիր ծրագիր:</p> <p>Թեմա 7. Փրկարար աշխատանքի կազմակերպումը ԱԻ և պատերազմի ժամանակ:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում`</p> <p>1) Ստուգաթղթ 7-րդ կիսամյակում, (դասընթացի վերջում) (20 միավոր)</p> <ul style="list-style-type: none"> ➤ Գնահատման մեթոդը` - Գործնական կատարումներ չափորոշիչներին համապատասխան - Ստուգողական հարցեր ➤ Գնահատման չափանիշները` - Մշակված նորմատիվների կատարում

	<ul style="list-style-type: none"> - Առարկայի իմացությունը 2) Մասնակցությունը դասընթացին (10 միավոր) <ul style="list-style-type: none"> ➤ Գնահատման մեթոդը` - Հաճախումների հաշվառում ➤ Գնահատման չափանիշները` - Ներկայությունը 3) Մասնակցությունը և ակտիվությունը գործնական աշխատանքներին (20 +10 միավոր) <ul style="list-style-type: none"> ➤ Գնահատման մեթոդը` - Ներգրավվածության աստիճանի հաշվում ➤ Գնահատման չափանիշները` - Ներկայությունը <p>Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում`</p> 4) Գործնական և ստուգողական աշխատանք (20 միավոր) <ul style="list-style-type: none"> - Գնահատման մեթոդը` - Ներգրավվածության աստիճանի հաշվառում - Գնահատման չափանիշները` - Տնային աշխատանքների կատարում - Մասնակցությունը լսարանային քննարկումներին - Մասնակցությունը ստուգողական աշխատանքներին 5) Ինքնուրույն աշխատանք (ընդհանուր գնահատականի 10 % կամ 10 միավոր) <ul style="list-style-type: none"> - Գնահատման մեթոդը` - Անհատական և խմբային աշխատանքի արդյունքում պատրաստված նախագծի պաշտպանություն - Գնահատման չափանիշները` - Անհատական աշխատանքի ներկայացում - Խմբային աշխատանքի ներկայացում - Թիմային աշխատանքի մասնակցություն - Թիմային աշխատանքի ձևավորված հմտություն <p>Հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վերը նշված 5 կետերի օգնությամբ հաշվվում է տվյալուսանողի ունակությունը, կարողությունը և հմտությունը</p>
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր</p> <ol style="list-style-type: none"> 1. Հ.Մ.Գրիգորյան-«Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, Երևան 2014թ. 2. Ալավերդյան Ռ., Սարաֆյան Կ., «Ջրիեղեղներ, Երևան 2000 թ. 3. Ասրյան Հ., Մամիկոնյան Յու., Մաթևոսյան Հ., Սարաֆյան Կ., «Ձեռնարկ ռազմական և արտակարգ իրավիճակներում վարելակերպի կանոնների մասին, Երևան 2001թ. 4. Մաթևոսյան Հ., Սարաֆյան Կ. և ուրիշներ «Ռազմական և արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների մասին, Ձեռնարկ, Երևան 2001թ. 5. Հովհաննիսյան Ս., «Աղետների ռիսկերի նվազեցման կրթություն, Երևան, ՓրինթինՖո 2011թ. 6. Հարությունյան Ս., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմունքներ, Երևան, Տնտեսագետ 2003 թ.

	<p>Լրացուցիչ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թ. 2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին», 2002 թ. 3. ՀՀ օրենք «Տեղական ինքնակառավարման մասին», Երևան, Նորք-Ֆիրմա ՍՊԸ 1996 թ 4. ՀՀ օրենքը «Սեյսմիկ պաշտպանության մասին», Երևան, 2007թ. 5. ՀՀ օրենքը «ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին», 1998 թ. 6. ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002 թ.
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՔԿ/բ-156 Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	4
			Սեմինար	4
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	52		
Ընդամենը	60			
Ստուգման ձևը	Ստուգաք			
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ բույսերի, կենդանիների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների և օրինաչափությունների վերաբերյալ, ուսանողներին ապահովել Էկոլոգիական գործոնների, բույսերի, կենդանիների առանձին խմբերի յուրահատուկ վերաբերմունքն արտաքին միջավայրի և որոշ Էկոլոգիական օրինաչափությունների, համակեցությունների հարմարվողական դերի մասին, կենսահամակեցությունների կառուցվածքի և թվակազմի կարգավորման մեխանիզմների մասին, ներտեսակային և միջտեսակային փոխհարաբերությունների, սուկցեսիաների և բույսերի կյանքի ձևերի մասին:			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • Էկոլոգիական գործոնների ազդեցությունը բույսերի վրա և նրանց միջև ստեղծվող փոխհարաբերությունների մասին, • համակեցությունների կառուցվածքի, նրանցում ընթացող միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունների մասին: • համակեցությունների առաջնային և երկրորդային հերթափոխության մասին: <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ 			

	<p>ուսումնասիրման մեթոդներին,</p> <ul style="list-style-type: none"> • բնության օրինաչափությունների վերլուծությանը: • Էկոլոգիա և բնապահպանության հիմունքների բնագավառում գործնական հմտություններին: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Յուրացնելով բույսերի Էկոլոգիական առանձնահատկությունների մասին գիտելիքները իրականացնել բույսերի, կենդանիների պահպանության միջոցառումներ • Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, • հանձնարարված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա1. Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկան« խնդիրները զարգացման տարբեր էտապներում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ զարգացման պատմությունը: Ժամանակակից Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկայի կառուցվածքն ու խնդիրները, դիրքը կենսաբանական գիտությունների համակարգում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ որպես բնության պահպանության և բնության ռացիոնալ օգտագործման տեսական հիմք:</p> <p>Թեմա2. Բույսերի, կենդանիների վրա արտաքին գործոնների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները: Հասկացողություն Էկոլոգիական գործոնների մասին: Աբիոտիկ «բիոտիկե անթրոպոգեն, Էդաֆիկ գործոններ: Սահմանափակող գործոններ: Գործոնի ազդեցության ուժ: Օպտիմում և պեսիմում: Կրիտիկական կետեր: Տեսակի Էկոլոգիական վալենտականություն: Օրգանիզմների Էկոլոգիական դասակարգման սկզբունքները:</p> <p>Թեմա 3. Լույսի դերը բույսերի, կենդանիների կյանքում: Բույսերի, կենդանիների Էկոլոգիական խմբերը լույսի նկատմամբ և դրանց ադապտացիոն յուրահատկությունները: Լուսապարբերականություն: Բույսերի, կենդանիների հարմարվողականությունը թույլ լուսավորվածության պայմաններին:</p> <p>Թեմա 4. Ջերմության նկատմամբ բույսերի, կենդանիների Էկոլոգիական վալենտականությունը: Ջերմաստիճանի ազդեցությունը օրգանիզմների կենսագործունեության վրա: Բույսերի, կենդանիների ջերմային ռեժիմի յուրահատկությունը: Բույսերի, կենդանիների մոտ ջերմակարգավորման հիմնական ուղիները: Բույսերի, կենդանիների ջերմային ռեժիմը և նրանց ոչնչացման պատճառները ցածր և բարձր ջերմաստիճանի դեպքում:</p> <p>Թեմա 5. Խոնավության նշանակությունը ցամաքային օրգանիզմների կյանքում: Ցամաքի վրա խոնավության ձևերը և աղբյուրները: Բույսերի մոտ խոնավության մուտքի ելքի ուղիները: Բույսերի Էկոլոգիական խմբերը ըստ</p>

	<p>ջրային հաշվեկշռի, հիդրոֆիտներ« մեզոֆիտներ և քսերոֆիտներ: Ջրի տարբեր ձևերի ազդեցությունը բույսերի վրա:</p> <p>Թեմա 6. Տեղումների տեսակը և դրանց էկոլոգիական դերը: Բույսերի, կենդանիների կյանքում էդաֆիկ գործոնը: Օդի կազմը և շարժումը: Քամու դերը տեսակների էկոլոգիայում: Յուրաքանչյուր դրաքան կյանքի միջավայր: Յուրաքանչյուր յուրահատկությունը: Յուրաքանչյուր ջրային ռեժիմը: Յուրաքանչյուր մեխանիկական կազմի էկոլոգիական նշանակությունը բույսերի, կենդանիների համար:</p> <p>Թեմա 7. Ժամանակը որպես էկոլոգիական գործոն բույսերի, կենդանիների կյանքում: 'Կենսաբանական ժամացույց': Բույսերի, կենդանիների, կենդանիների օրական և ցիրկադային ռիթմը: Բույսերի, կենդանիների էկոլոգիական խմբերն ըստ օրական ակտիվության: Յիմնական ադապտացիաները: Լուսնային ռիթմեր, դրանց յուրահատկությունը: Մակընթացության և տեղատվության ռիթմերը օվկիանոսում: Սեզոնային ռիթմեր: Դրանց ադապտիվ բնույթը: Բույսերի, կենդանիների հարմարվածությունը տարվա անբարենպաստ պայմաններին: Սեզոնային զարգացումը ղեկավարող գործոններ: Բույսերի, կենդանիների մոտ պերիոդիկ մի երևույթի էությունը:</p> <p>Թեմա 8. Բիոտիկ կապերի հիմնական տիպերը« դրանց դրսևորման յուրահատկությունը միջտեսակային և ներտեսակային հարաբերություններում: Գրշատիչ-գոհ« մակաբույծ-տեր փոխհարաբերությունները: Այդ կապերի ընդհանուր գծերը և յուրահատկությունը:</p> <p>Թեմա 9. Յամակեցություն: Յակացողություն բուսական համակեցության մասին, համակեցության կառուցվածքը: Ստաբիլ և ոչ ստաբիլ համակեցություններ Յակացողություն կենսացենոզի մասին: Ֆիտոցենոզ: Կենսացենոզի կառուցվածքը: Սահմանային Էֆեկտ: Կենսացենոզի տարածական կառուցվածքը: Ջրային և ցամաքային կենսացենոզների տարբերությունը:</p> <p>Թեմա 10. Յամակեցության ստաբիլության հիմնախնդիրը: Սուկցեսիաների ընդհանուր օրինաչափությունները: Առաջնային և երկրորդային սուկցեսիաներ: Սուկցեսիաների յուրահատուկ տարբերակները:</p> <p>Թեմա 11. Բույսերի, կենդանիների վրա միջավայրի գործոնների ձևառաջացնող ազդեցությունը: Յակացողություն բույսերի, կենդանիների կյանքի ձևերի մասին: Կյանքի ձևերի ձևավորման հարմարվողական նշանակությունը: Կյանքի ձևերի դասակարգումը:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p><u>6. Գնահատման մեթոդներն ու չափանիշները.</u></p> <ul style="list-style-type: none"> ▪ 6.1. դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում` <ol style="list-style-type: none"> 1) Մասնակցությունը դասընթացին (20 միավոր) <ul style="list-style-type: none"> ➢ Գնահատման մեթոդը` - Յաճախումների հաշվում ➢ Գնահատման չափանիշները` - Ներկայությունը 2) Մասնակցությունը և ակտիվությունը գործնական աշխատանքներին (20 միավոր) <ul style="list-style-type: none"> ➢ Գնահատման մեթոդը`

	<ul style="list-style-type: none"> - Ներգրավվածության աստիճանի հաշվում ➤ Գնահատման չափանիշները` - Ներկայությունը 3) քննություն 4) Գործնական և ստուգողական աշխատանք (ընդհանուր գնահատականի 20 % կամ 20 միավոր) - Գնահատման մեթոդը` - Ներգրավվածության աստիճանի հաշվառում - Գնահատման չափանիշները` - Տնային աշխատանքների կատարում - Մասնակցությունը լսարանային քննարկումներին - Մասնակցությունը ստուգողական աշխատանքներին 5) Ինքնուրույն աշխատանք (ընդհանուր գնահատականի 10 % կամ 10 միավոր) - Գնահատման մեթոդը` - Անհատական և խմբային աշխատանքի արդյունքում պատրաստված նախագծի պաշտպանություն - Գնահատման չափանիշները` - Անհատական աշխատանքի ներկայացում - խմբային աշխատանքի ներկայացում - Թիմային աշխատանքի մասնակցության աստիճան - Թիմային աշխատանքի ձևավորված հմտություն 6)Բոնուսներ (ընդհանուր գնահատականի 30 % կամ 30 միավոր) - Գնահատման մեթոդը` - Վերը նշված 6 տարբեր կետերից առաջացած արդյունքների հանրագումարը - Գնահատման չափանիշները` <p>Հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վերը նշված 6 կետերի օգնությամբ հաշվվում է տվյալ ուսանողի ունակությունը, կարողությունը և հմտությունը</p> <p>6.1. Գնահատման մեթոդներն ու չափանիշները</p> <p>Գնահատումը կատարվում է բուհում ընդունված 100 միավորանոց բազմագործոնային գնահատման կանոնակարգի համաձայն.</p> <ul style="list-style-type: none"> - մեկ եզրափակիչ քննություն -երկու ինքնուրույն աշխատանք -երկու ստուգողական աշխատանք -մասնակցությունը դասընթացին (մինչև 20 միավոր) -մասնակցությունը և ակտիվությունը գործնական աշխատանքներին (մինչև 20 միավոր) -եզրափակիչ քննություն -գործնական և ստուգողական աշխատանք (մինչև 20 միավոր) -ինքնուրույն աշխատանք (մինչև 10 միավոր) -ուսանողի հմտությունները և կարողությունները (մինչև 30 միավոր) -դրական համարվում է 8-ից 20 միավորը <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 33%;">Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի</td> <td style="width: 33%;">Գնահատականը ըստ100 միավորանոց համակարգի</td> <td style="width: 33%;">Գնահատականը ըստ կրեդիտային համակարգի</td> </tr> <tr> <td>“գերազանց” (5)</td> <td>96-100</td> <td>A+</td> </tr> </table>	Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ100 միավորանոց համակարգի	Գնահատականը ըստ կրեդիտային համակարգի	“գերազանց” (5)	96-100	A+
Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ100 միավորանոց համակարգի	Գնահատականը ըստ կրեդիտային համակարգի					
“գերազանց” (5)	96-100	A+					

	"գերազանց" (5)	91-95	A	
	"գերազանց" (5)	86-90	A ⁻	
	"լավ" (4)	81-58	B ⁺	
	"լավ" (4)	76-80	B	
	"լավ" (4)	71-75	B ⁻	
	"բավարար" (3)	66-70	C ⁺	
	"բավարար" (3)	61-65	C	
	"բավարար" (3)	55-60	C ⁻	
	"անբավարար" (2) ¹	40- 54	D	
	"անբավարար" (2) ²	մինչև 40	F	
	"ստուգված"	55-100	S	
	"չստուգված" ¹	40-54	U	
	"չստուգված" ²	մինչև 40	U	
	Գնահատման սանդղակը ¹)Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը ²)Զի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը			
	Գրականություն	Պարտադիր- 1. Двороковский М. С.- Экология растений-1983 г. 2. Горышина Т. К.- Экология растений-1978 г. 3. Березина Н.А., Афанасьева Н.Б.- Экология растений.2009г 4. Մելքումյան- Էկոլոգիա, 2009թ. 5. В.А.Радкевич "Экология" Минск. 6. Н. М. Черпова, А.М.Былова "Экология", М., 1980թ. 7. А.А. Хван "Экология" М., 2002թ. 8. Հարությունյան Լ. Վ.- Ընդհանուր Էկոլոգիա,1998թ. Լրացուցիչ- 1. Юджин, Одум "Экология". В 2-х томах. 1986 2. Чернова Н.И., Былова А.М.- "Общая экология". 2004 3. Бигон "Экология" М., 1999.		

ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՔԿ/Բ-178. Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 7-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	8	Դասախոսություն	4
			Սեմինար	4
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	52		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	«Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում» առարկայի հիմնական նպատակն է ուսանողների տալ գիտելիքներ բժշկագիտության հիմունքների, հիվանդությունների դասակարգման,			

	<p>առաջացման պատճառների, ընթացքի, կանխարգելման մասին: Նրանց մոտ զարգացնել անհրաժեշտ հմտություններ աղետների օջախում տուժածներին առաջին և մինչբժշկական օգնություն ցույց տալու համար, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի բժշկական օգնություն ցուցաբերելու համար արտակարգ իրավիճակների պայմաններում: Ուսանողների մոտ արմատավորել հմտություններ և կարողություններ կատարելու վիրակապություն, դնել բեկակալ, չափել հիվանդի կամ տուժվածի զարկերակային ճնշումը, որոշել պոլսը, շնչառության հաճախականությունը, չափել մարմնի առավելագույն ջերմությունը, վերահսկել տուժվածի վիճակը, կանխել վնասվածքային շոկի առաջացումը, կազմակերպել ճիշտ օգնություն վնասվածքների ժամանակ, կատարել ճիշտ տեղափոխություն: Գաղափար կազմել առողջ ապրելակերպի, սեռական դաստիարակության մասին: Ծրագրով նախատեսված են դասախոսություններ և գործնական պարապմունքներ լսարաններում և կաբինետներում, իսկ կլինիկային հատկացված ժամերը անց են կացվում հիվանդանոցում և պոլիկլինիկայում:</p>
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • Հիվանդությունը (ոչ վարակիչ և վարակիչ): • Հիվանդի (վարակիչ և ոչ վարակիչ) հետազոտությունը և ախտորոշումը: • Հիվանդի խնամքը՝ սիրտ-անոթային, շնչառության, մարսողության, էնդոկրին, միզազատական և վարակիչ հիվանդությունների ժամանակ: • Սիրտ-անոթային օրգանների հիվանդություններ: • Սիրտ անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի նվազման պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Սիրտ անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի կանգի պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Արյան գերճնշման պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Բրոնխների բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը: • Բրոնխների ասթման՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Թոքերի բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Մարսողության օրգանների հիվանդությունները՝ • Ստամոքսի բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Խոցային հիվանդություն՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Էնդեմիկ խափա՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը:

	<ul style="list-style-type: none"> • Շաքարախտը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Երիկամի բորբոքում՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Մեզահեռացնող ուղու բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: • Վարակիչ հիվանդությունների (անվանախմբավորումները, պատճառները): • Դիզենտերիա՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Լյարդի բորբոքում՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը: • Ջրծաղիկ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Դիֆտերիա՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Էպիդեմիկ պարոտիտ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Բժավոր տիֆ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Բրուցելյոզ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Սիբիրախտ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: • Իմունիտետը: Պատվաստումը: • Անոթազարկի հաճախականությունը չափելը: • Մեխանիկական ճնշումաչափիչով և հնչյունալսիչով արյան ճնշման չափելը: • Մեխանիկական ճնշումաչափիչով առանց հնչյունալսիչով արյան ճնշման չափելը: • Շնչառության շարժումների հաճախականությունը չափելը: • Դեղանոթից դեղանյութի գետեղումը ներարկիչի մեջ: • Դեղանյութի ենթամաշկային ներարկումը: • Դեղանյութի ներմկանային ներարկումը: • Դեղանյութի ներանոթային ներարկումը: • Դեղանյութի ներմուծումը ականջի մեջ: • Դեղանյութի ներմուծումը քթի խոռոչ: • Մարմնի ջերմաստիճան չափելը: • Արյան տեղային արյունահորդություն առաջացնող միջոց դնելը: <p><i>Յմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում: • անոթազարկի հաճախականությունը չափելը: • մեխանիկական ճնշումաչափիչով և հնչյունալսիչով արյան ճնշման չափելը: • շնչառության շարժումների հաճախականությունը չափելը: • դեղանոթից դեղանյութ գետեղել ներարկիչի մեջ: • մարմին ենթամաշկային ներարկել դեղանյութ • մարմին ներմկանային ներարկել դեղանյութ
--	---

	<ul style="list-style-type: none"> • մարմին ներանոթային ներարկել դեղանյութ • Դեղանյութ ներմուծել ականջի մեջ: • Դեղանյութ ներմուծել քթի խոռոչ: • Մարմնի ջերմությունն չափել: • Արյան տեղային արյունահոսողությունն առաջացնող միջոց դնել <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Հիվանդի հետազոտության մեթոդներին և առաջին բուժօգնությունն ցուցաբերելուն • անձնական հիգիենայի կանոններին • հիվանդի խնամքի կազմակերպմանը • առողջությունը պայմանավորող բաղադրիչների ճիշտ կիրառումը
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանումն առարկայի նպատակը, խնդիրները, առանձնահատկությունները և հետազոտության մեթոդները: Հիվանդություն (ոչ վարակիչ, վարակիչ), հիվանդի (ոչ վարակիչ, վարակիչ) հետազոտությունը և ախտորոշումը:</p> <p>Թեմա 2. Սիրտ-անոթային օրգանների հիվանդություններ՝ սիրտը անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի նվազում՝ առաջին բուժօգնությունը, սիրտը անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի կանգ՝ առաջին բուժօգնությունը, արյան գերճնշում:</p> <p>Թեմա 3. Ընչառության օրգանների հիվանդություններ՝ բրոնխի բորբոքում (բրոնխաբորբ), բրոնխների ասթմա (բրոնխադժվարաշնչառություն), թոքի բորբոքում (թոքաբորբ):</p> <p>Թեմա 4. Մարսողության օրգանների հիվանդություններ՝ ստամոքսի բորբոքում (ստամոքսաբորբ), բարակ աղու խոց: Ներզատիչ օրգանների հիվանդություններ՝ շաքարախտ, էնդեմիկ խալիպ: Դիպենտերիա (Աղիքամանրեախտ): Լյարդի բորբոքում: Իմունիտետ: Ջրծաղիկ, կարմրուկ, Էպիդեմիկ պարոտիտ:</p> <p>Թեմա 5. Մեզագոյացնող և մեզ հեռացնող օրգանների հիվանդություններ՝ երիկամի բորբոքում (երիկամաբորբ), մեզահեռացնող ուղու բորբոքում (մեզաուղաբորբ): Վարակիչ հիվանդություններ: Դիֆտերիա, բժավոր տիֆ, բրուցելոզ, սիբիրախտ, դաբաղ:</p> <p>Թեմա 6. Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանումն առարկայի նպատակը, խնդիրները, առանձնահատկությունները և հետազոտության մեթոդները: Հիվանդություն (ոչ վարակիչ, վարակիչ), հիվանդի (ոչ վարակիչ, վարակիչ) հետազոտությունը և ախտորոշումը: Անոթազարկի հաճախականության չափումը: Արյան ճնշման չափումը:</p> <p>Թեմա 7. Սիրտ-անոթային օրգանների հիվանդություններ՝ սիրտը անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի նվազում՝ առաջին բուժօգնությունը, սիրտը անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի կանգ՝ առաջին բուժօգնությունը, արյան գերճնշում: Դեղանյութի գետեղումը դեղանոթից ներարկիչի մեջ, դեղանյութի ենթամաշկային ներարկումը,</p>

	<p>դեղանյութի ներմկանային ներարկումը, դեղանյութի ներանոթային ներարկումը:</p> <p>Թեմա 8. Շնչառության օրգանների հիվանդություններ՝ բրոնխի բորբոքում (բրոնխաբորբ), բրոնխների ասթմա (բրոնխադժվարաշնչառություն), թոքի բորբոքում (թոքաբորբ): Շնչառության շարժումների հաճախականության չափումը: Հիվանդի անհատական հիգիենան և պահպանման կանոնները:</p> <p>Թեմա 9. Մարսողության օրգանների հիվանդություններ՝ ստամոքսի բորբոքում (ստամոքսաբորբ), բարակ աղու խոց: Ներզատիչ օրգանների հիվանդություններ՝ շաքարախտ, էնդեմիկ խաչիպ: Արյան տեղային արյունահորդում: Ստամոքսի լվացում:</p> <p>Թեմա 10. Մեզագոյացնող և մեզ հեռացնող օրգանների հիվանդություններ՝ երիկամի բորբոքում (երիկամաբորբ), մեզահեռացնող ուղու բորբոքում (մեզաուղաբորբ): Վարակիչ հիվանդություններ: Իմունիտետ, պատվաստում: Դիզենտերիա (Աղիքամանրեախտ): Լյարդի բորբոքում: Ջրծաղիկ: Հոգևաների տեսակները և դրման տեխնիկան:</p> <p>Թեմա 11. Դիֆտերիա, Էպիդեմիկ պարոտիտ, կարմրուկ, բժավոր տիֆ: Բուժական սնունդ և դիետիկ սեղաններ:</p> <p>Թեմա 12. Բրուցելլոզ, սիբիրախտ, դաբաղ: Բնական, խառը և արհեստական սնուցում:</p>
